ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-ԻՑ 25-Ը ՎՐԱՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Ք. Թբիլիսի, Վրաստան, 2019թ. սեպտեմբերի 23-25-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցել Շուկայի ազատականացման և էլեկտրաէներգիայի առևտրի ծրագրի շրջանակներում Հայաստան-Վրաստան աշխատանքային խմբի հերթական հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   ՀՀ և Վրաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերի էլեկտրաէներգիայի շուկաների ազատականացման և միջպետական առևտրի զարգացման հետ կապված հարցեր

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Ներկայացվեց ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման և միջպետական առևտրի հետ կապված վերջին զարգացումները: Ներկայացրեցի նաև «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագրի ընթացքը և վերջին զարգացումները:
   Այցի շրջանակներում հանդիպում ունեցա Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարի տեղակալ Դավիթ Թվալաբեյշվիլիի հետ: Քննարկեցինք էներգետիկայի բնագավառում ՀՀ և Վրաստանի միջև համագործակցության հետ կապված մի շարք հարցեր:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Հանդիպման արդյունքներով ՀՀ և Վրաստանի համապատասխան պետական ընկերությունների միջև ստորագրվեց արձանագրություն

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակել աշխատանքները վերոնշյալ աշխատանքային խմբի շրջանակներում, ինչը կնպաստի էներգետիկայի բնագավառում ՀՀ և Վրաստանի միջև համագործակցության ամրապնդմանը, ինչպես նաև կողմերի միջև էլէեկտրաէներգիայի առևտրի հետ կապված հարցերում առաջընթաց գրանցելուն

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**